

Վ Ե Յ Ե Ր Ո Ւ Ր Գ Տ Ա Ր Ի

ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կես տարվանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արասխանեանի խանութում:

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ

Օտարները սխալվում են հայերի մասին.—
Ն, երբ ին տեսու թիւն, Նամակ վաղի-
կապիտանի, Նամակ խմբագրի: Ներքին լուրեր:
— Արտաքին տեսու թիւն, Թիֆլիս: Պ.
1 այսպիսի կոմս Գեորգիի ապրիլ 26-ին դրած
Նամակը: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լու-
րեր, — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց:
— Բ ա ն ս ս ի բ ա կ ա ն: Պատրաստվենք:

ՕՏԱՐՆԵՐԸ ՄԻԱՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն մի ճշմարտ, բազմա-
կանապէս ընկած ազգ, իր զրու-
թեան, վեճակին համեմատ նե-
ղութիւններ կրելուց ջոկ, վայե-
լում է մի տեսակ անպատիւ անուն
իր չորս կողմը բնակվող, իրան
շրջապատող ազգերից:

Բայց այդպէս անարդար և ան-
տեղե վարվելու պատճառը, մէկ
կողմից ազատ ազգերի տգիտու-
թիւնն է ընկած ազգերի վերա-
բերմամբ, միւս կողմից, ընկած
ազգի ճշմարտ գրութիւնը: Մի
ազգ, որ ընկած է, քաղաքակա-
նապէս, տնտեսականապէս և բա-
րոյապէս կաշկանդված է, ոչ մի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՏԵՐԱԳՈՒՆԻՔ

Անցեալին վրա ողբալ միայն՝ երեխայի դործ
է, Անցեալի փորձով խրատուած, դէթ ներկային
մէջ պատրաստութիւնը ապագային համար:
Այսօր մեր ազգի համար կենսական հարցե-
րն մին է թուրքաբանակ հայերի վիճակն: Եւ-
րոպական ազգերն որք երէկ անտարբեր էին
հային համար, այսօր քիչ թէ չառ կը հետաքը-
քուրին այդ հարցով: 1) ուրեմն մեք հայերս
նրչափ պէտք կարեւորութիւն տանք, ուշադրու-
թիւն դարձունենք նորա վրա և անդադար
գրենք, խօսենք և դործենք, մինչև որ դոճացու-
ցիչ կերպով լուծուի այդ հարց:

Նկատելով այն ամեն պարագայներ որք չըջա-
պատած են զմեզ այսօր, կը հրաւիրենք ազգա-
սէր հայերն ուշադրութիւնով մտածել յետագայ
երկու կէտերի վրա և այժմէն պատրաստուիլ
գործի համար որ շատ ստիպողական է:

Ա. Վանի կողմերէն առուած վերջին տեղե-
կութիւններն կը հաստատեն թէ պատերազմէն
յետոյ սարսափելի սով պիտի տիրէ այն կող-
եր: Ի՞նչ պիտի անեն խեղճ վանդակներն: — Պիտի

1) կիմանա՞մք թէ կարին անգլիական հիւպա-
տան հաղորդած է լճորդն անգլիական կառա-
վարութիւնին, Վանի մէջ եղած հարստահարու-
թիւններն որք արձագանք ունեցել են Թայմս
լրագիրին մէջ ալ: Հետեւապէս անգլիական և
թուրք կառավարութիւններ կողմէն քննիչ եկեր
է Վան, այդ հարստահարութիւններ քննելի
պաշտօնով Վանի հայերն հարստահարութիւն-
ներ մի ընդարձակ և մանրամաս տեղեկագիր
տուած են քննիչ էյճ մըտքը Բասսամին:

կողմից եւր, ճանապարհ չունի,
իր մտաւոր և հոգեկան ընդունա-
կութիւնները զարգացնելու, առա-
ջացնելու, բնականապէս նորա վատ
կողմերը տեղի երևան կը գան և
աւելի հեշտ օտարների աչքին կը
ընկնեն:

Օտարը հէնց որ մի պակա-
սութիւն նկատեց մի անհատի
կամ հասարակութեան մի դասի
մէջ, պատրաստ է իսկոյն այդ
պակասութիւնը իրբւ մի ազգա-
յին թերութիւն ամբողջ ազգին
յատկացնել:

Եթէ մի ընկած ազգի պատկա-
նողը պատահմամբ անազնի առև-
տրական է կամ մի վսիկոտ անձն,
ուրեմն ամբողջ ազգն էլ անազնի
առևտրականներից է բաղկացած,
ամբողջ ազգն էլ վսիկոտ է:

Ընթերցողը, դորա հակառակ
կարող է մտածել, թէ օտարը
հանդիպում է մի ազնիւ վաճա-
ռականի, քաջ զինւորականի... ու-
րեմն և կարող է լաւ դադարիար
կազմել ընկած ազգի վրա — այդ

ի հարկէ առողջ դատողութեան
համեմայն կը լինէր, բայց իսկա-
պէս այդպէս չէ լինում: Ընկած
ազգերին վեճակված է, որ օտար-
ները նրանց վերաբերմամբ միայն
վատ յատկութիւնները ընդհան-
րացնեն և ազգային յատկութիւն
բարձրացնեն, իսկ լաւ յատկու-
թիւնները չը տեսնեն:

Հայերը վաղուց պատկանում
են այդպիսի մի թշուառ ազգին:
Որ կողմը որ շուռ ես գալիս, լը-
սում ես հայերի մասին միայն վատ
բաներ: Եթէ մի հայ բարեգործ
է, խելքը գիտնական է, ազնիւ է,
երևելի քաղաքագէտ կամ քաջ զին-
ւորական, պատերազմական հան-
ճար է, դորա մասին օտարները
ոչինչ չը գիտեն և թէ գիտեն՝ դո-
րան իբրև անհատ և ոչ թէ իբրև
հայ. իսկ եթէ պատահմամբ մի
հայ խաբէր մէկին, նոյն իսկ, ամե-
նաչափ բանի մէջ, իսկոյն նոյն
օտարը ոչ թէ միայն կը ճանա-
չէր խաբողին, այլ և ամբողջ հայոց
պատմութիւնը: Ի հարկէ Հայկից

սկսած մինչև ներկայ սերունդը կը
մեղադրէր այդ բանում:

Օտարները սխալվում են: Ճշ-
մարիտ է, պէտք է խոստովանենք,
հայերը ունեն պակասութիւններ,
այո՛, միանգամայն խոշոր և վատ
յատկութիւններ, բայց զբանք չեն
փնտրում օտարներին, ընդհակա-
ռակն օգուտ են բերում նրանց:

Եթէ կայ մէկը, որ փնտրում է
հայի պակասութիւններից, այդ
հայ ազգն է, եթէ կայ մէկը, որ
կարող է արդարացի գանգատներ
անել հայի վատ յատկութիւնների
վրա, այդ նրա ազգակիցն է, այդ
նրա հայ եղբայրն է: Հայի պակա-
սութիւնները, վատ յատկութիւն-
ները, ներքին, ընտանեկան են.
հայի պակասութիւնները նման են
տան բռնակալի պակասութիւն-
ներին: Տան բռնակալը դուրսը
ազնիւ մեծահոգի է, իր գործըն-
րում բարեսիրտ, առատաձեռն է,
նրա վարմունքը քաղաքավարի,
քնքուշ, նրա դատողութիւնները
ազատ և խոհեմ, ինչ մեծ պա-

տեղ գործածէ իւր բանակների մէջ. իսկ թէ
կաշիներն քերթած ժամանակ կտրտուին, այդ
կտորներէ ալ տրեխ կը շինէ և իւր բարիկ գոր-
քերի ոտքն անցունելով կը տանի պատերազմի
գաշան: Երբ մարդ կը մտածէ նոցա այս վիճակի
վրա, սարսուռ և դող կը գնան իւր երակների
մէջ:

Պատերազմէն յետոյ, աւելի թշուառ պիտի
լինի թուրքական Հայաստանի վիճակն քան թէ
այժմ, զի թուրք տէրութիւնն սնանկացած է,
կամ որպէս կասեն Վ. Պոլսեցիներն, թօփը նե-
տած լինցած է: ուրեմն ինչպէս պիտի վճարէ
իւր պարտքեր և պատերազմական ծախքերն և
ինչպէս պիտի լեցունէ իւր պակասած, սպառած
ոյժերի տեղը: Յայտնի բան է թէ քրիստոնէայ-
ներն աւելի և աւելի պիտի կողպտեն, այնպէս
որ թուրքական Հայաստանի մէջ սարսափելի
սով պիտի լինի որ նշաններն արդէն սկսած են
երևիլ Վանի կողմեր:

Հարկ է ուրեմն որ մտածենք այդ կէտի վրա
և այժմէն պատրաստուինք այդ սարսափելի
ապագայի համար: Այն բարեգործութիւն աւելի
օգտակար և ընդունելի է որ խոհեմութիւնով և
ժամանակին կը կատարուի: Կան վայրկեաններ
որ անթիւն մի կտոր հայ տալով նորա կենսք
կազատի. իսկ այդ վայրկեան անցնելէ յետոյ
թէ փոռեկով ալ հայ տաս, ալ ժամանակն ան-
ցած և նմա համար ամեն բան վերջացած կը
լինի: Ուրեմն հարկ է որ այժմէն պատրաս-
տուինք: Միթէ չէ կարելի որ այստեղ հաստա-
տուի մի Կասնածողով որ թուրքական Հայաս-
տանի գաւառներին հետ թղթակցութիւն և յա-
րաբերութիւն ունենայ, որ բաւական մեծ դու-
մար դրամագլուխ ձեռք բերած և ապահով տեղ
տոկոսի առած լինելով, այդպիսի ճշմարտների
մէջ անմիջապէս և ժամանակին կարողանայ հաս-
նիլ և օգնել:

Կարող երկրորդ կէտին, մեք իրաւունք կը հա-
մարենք հարցնել որ թուրքական Հայաստանի
հայերին թէ այս պատերազմէ յառաջ և թէ այս
պատերազմի միջոցին կրած նեղութիւններն և
թափած արևուններն միթէ բողոքովն պարնայ

պիտի երթան: Միթէ հարկ չէ որ այժմէն մտա-
ծենք թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնուի
որ հայերի խնդիրն ալ ներկայացուի դեսպա-
նածոցովն: միթէ հարկ չէ, որ այս մասին բա-
նակցութիւններ և յարաբերութիւններ անենք
պէտք եղած տեղերին հետ և վերջապէս, որ-
չափ կարելի է, պատրաստուինք այդ գործի
համար: Յետոյ երբ ամեն բան վերջանայ և մեք
արևելեան հարցին մէջ անմաս անբաժին մնանք,
այնչափ շատ իրաւունք չենք ունենար գանգա-
տիլ զի կը պատասխանեն մեզ թէ ինչ գործե-
ցիք որ այժմ կը յուսաք: Ինչ ցանցից որ այժմ
կուղէք հնձիլ: Իրաւ է որ Հայաստանի դաշ-
տերն հայերի արհնով և արտասուքով ջրուե-
ցան, բայց ոչինչ չը ցանցից որ այդ դաշտեր
բուսցունէին և պողարերէին... Եւ միթէ այդ-
պէս չէ. բարբարոս թուրքերն և քուրդեր ամեն
հարստահարութիւններ և սրբապղծութիւններ
դործելէ յետոյ՝ մինչև անգամ կը ջարդեն կը
կտորեն հայերն և մեք դեռ այնչափ անգործ
կը մնանք որ եւրոպական բոլոր տէրութիւնե-
րին յատուկ յատուկ հանրագիրներ ուղղելով
թուրքաբանակ հայերի թշուառ վիճակն չենք
ներկայացունք անգամ և նոցա թափած արիւ-
նին փոխարէն չենք պահանջեր դեռ:

Կիտեմք թէ թուրքաբանակ ազգասէրների
սիրտին մէջ արիւնն կեռայ և կեփի այժմ, բայց
ինչ անեն խեղճերն. նոցա լեզուներ կապուած
են և ձեռքեր կաշկանդուած: Նոքա իւրեանց
ճշուած զիրքի մէջ կարող չեն իւրեանց վիճակ
բողոքովն յայտնի համարձակ ներկայացունել
դեսպանատնորհարդին. ուստի ուստիարեանկ ազ-
գայիներն հարկ է նոցա զգացումների թարգ-
ման հանդիսանան և պարզապէս յայտնեն նոցա
զրուութիւն: Թուրքայի հայեր շատ բաներ կը
սպասեն այժմ Թուրքիայի հայերէն զի սոցա զիրք
կոզնէ այժմ գործել: հիւսիսն մազնիսական
զորութիւն ունեցած է նոցա համար և այն տեղի
ազգասէրների սիրտին վրա շարժող սլաքն որ
կողմ ալ դարձունես այժմ, մազնիսացած ծայրն
կը դառնայ միշտ դէպ հիւսիս, այն է դէպ իւ-
րեանց ուստիարեանկ կը պարնայ:

կատարելներ էլ որ տեսնի նա
 օտարի մէջ, աչքին չի երևալ մէկ
 խօսքով, ամեն բան գեղեցիկ, լաւ,
 սքանչելի է նրա համար, որով
 հետեւ օտար է, ամենից զուրս է:
 Նա իր քաղցր լեզուով ամենին
 դուրեկան է, ամենին հաճելի է:
 Նայց մի և նոյն մարդը, տան
 բռնակալը, հէնց որ իր տան շեմքի
 վրա ոտքը դնում է, մտնում է
 իր ընտանիքի շրջանը, իր առջևը
 տեսնում է կինը, որպէք... ինչ
 պէս նա յօնքերը կրում է, ինչպէս
 նորա մէջ ամեն բան դէպի չարն
 է փոխուում: վարձուները կոպիտ,
 գատաղութիւնը վայրենի, սիրտը
 կոշտ, հոգին ժլատ... ամենքը վատ
 են, որովհետեւ իրան մօտիկ են,
 ամեն բան վատ է, անտանելի է,
 որովհետեւ իրա տանն է: Նոյն
 պէս հայր օտարի մօտ բարեխիտ
 է, առատաձեռն է, հայի համար
 օտարի մօտ ամեն բան լաւ է,
 որովհետեւ օտար է, հայր ամեն
 բան պատրաստ է օտարի համար
 դոհելու, մի և նոյն հայր դէպի իր
 ազգակիցը, դէպի հայութիւնը,
 դէպի ազգութիւնը բոլորովն ու
 ընդ է, ինչ որ հայերէն է վատ է
 նրա համար: Այժմ հայր ար
 տաքսում է իր տանից մայրենի
 լեզուն, եթէ հայ կինը օտար լեզ
 ւով է դաստիարակում իր որդւոցը,
 եթէ հայ չէ մասնակցում ազգա-

յին առաջադիմութեան գործին,
 չէ օգնում հայ ուսումնարաննե
 րին, հայ թատրոնին, հայ մամու
 ւին... թողնում է իր մայրենի լե
 զուն, մոցնում է իր տան մէջ
 օտար լեզու, օտար սովորութիւն
 ներ... փոխում է իր անունը, օգ
 նում է օտարին մինչև անգամ այն
 ամեն բաների մէջ որոնք ուղղակի
 փաստակար են իր ազգութեանը,
 մէկ խօսքով հայր ինքն իրան ու
 ըմբում է և օտարի առջև ծայ
 վում է, հայր ինքն իրան չէ պա
 տովում, չունի անձնական հպար
 տութիւն, չէ էլ կարող սպասել
 օտարից պատիւ, յարգանք: Ար
 չափ որ օգտաւէտ լինէր այս
 պէս օտարը զրան յարգել, պա
 տել կարող չէ:

Արեւմտ օտարները հայերի մա
 սին չեն սիսալվում... Երբ կը գայ
 այն օրը, որ օտարները չարաչար
 սիսալվէին:

Իւնիս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՍԻԿԱՎԱՍԻՑ

Եթէ ցանկալի է ձեզ, ահա մի համառօտ տե
 ղեկութիւն այստեղի դրութեան մասին, վա
 ղեկավարը ներկա պատերազմի պատճառա
 մեծ շարժութեան է ներկայից: Յայտնի է,
 որ Սև ծովի վրա նաւազնացութիւնը փակված
 է: Ինչ ապահովութիւն պիտի տրուի և ինչ միջոց
 պիտի ձեռք առնուի որ Հայաստանի մէջ եղած
 Տարածաշարութիւններն զարգին:

Թէև Թուրքիայի հայերն շատ իրաւունքներ ու
 նին թուրք կառավարութիւնէն պահանջելիք և
 թէև շատ կերպեր կան որովք կարելի է հարստա
 շարութիւններն թեթեւացուել և որոց վրա պէտք
 է այժմէն մտածել և գործադրութիւն պահան
 ջել: Բայց մեր կուզեմք ներկայացուել այստեղ
 մի գլխաւոր կետ որ, մեր տեսութիւնով, այն
 չափ ստիպողական և անհրաժեշտ է որ և ոչ
 մի պայմանով չէ կարելի հրաժարել այս պա
 հանջէ:

Թուրք կառավարութիւնն ինչ բարեկարգու
 թիւն ալ որ խոտաւանայ, միթէ իր տգէտ նա
 հանգապետները, այդ մտեւանը և անըզուսակ
 թուրք փաշաները ձեռքով չը պիտի գործադրէ
 Հայաստանի նահանգներին մէջ: Մեր այդ թուրք
 փաշաների վրա վստահութիւնն չունենք ընտ
 և Թանգիմաշի հրատարակութիւնէն մինչև այժմ
 փորձերն ցոյց տուած են թէ նոյն իսկ սուլ
 թաների փափաքներն, բարձր հրամաններն և
 հրովարակներն չափազանց դանդաղ կերպով
 կը գործադրուին Հայաստանի նահանգներին
 մէջ: Պի թուրք նահանգապետներն կրօնական մո
 ղեռանդութիւնով միշտ համակրութիւն կը ցոյց
 տան քրիստոնէականներին զէմ մասնատակաների
 ունեցած ատելութիւնէն և կը զրկեն հայ ժողո
 վորդն օրէնքով ունեցած իրաւունքներն:

Արեւմտ Հայաստանի այն նահանգներ ուր ա
 մենէն աւելի հարստաշարութիւններ եղած են
 և կը լինին անհրաժեշտ հարկ է որ հայազգի
 նահանգապետներ (վալի) դրուին որք արգարա
 դատ և անաշտ անձերէ ընտրուելով ժողո
 վորդի քաւէնքն, պէտք է որ ընտրութիւններն
 վաւերացուին Սուլթանի յատուկ հրովարա
 կովն: Եւ այդ նահանգապետներ չը կրնան փո
 փոխուիլ, մինչև որ ունէ յանցանք չը հաստա
 տուի նոցա վրա օրինաւոր և հրապարակային
 դատաստանով: Տիրապետող իրաւունքն ու
 Թուրք կառավարութիւնն կարող չը պիտի լի
 նէր Արեւմտի կողմը պատահող անկարգու

թիւնով, Ռուսաստանից և արտասահմանից կող
 կաս անցնելու, և փոխադարձաբար, միակ ճա
 նագարը այժմ վաղեկակալի վրայով է: Բոս
 տով-վաղեկակալիստան երկաթուղու քանի մի
 գնացքը ամեն օր բերում է այստեղ անհամար
 քանակութեամբ ապրանք, որով կատարել լըք
 ցված է լինում շարունակ առդիս իջնանը: Այդ
 բանաց այդպիսի մեծ քանակութեամբ գումար
 վերուն պատճառաւ էլ սուսակի թանգազած է
 ապրանաց քրհնը: Այստեղից մինչև թիֆլիս քր
 հնը մի 7-8 ամիս առաջ 40-50 կօպ է եղել,
 իսկ այժմ հասած է 2 ր. - 2 ր. 20 կօպէկի, չը
 նայելով որ ամեն կողմից հաւաքված են այստեղ
 սայրապաններ:

Համարեա ամեն օր բերում են այստեղ թիֆլի
 սից ֆուրգօնների երկար շարքերով, երբեմն մինչև
 երեսուն հիւանդ և վիրաւորված սօլդատներին
 որոնց Ռուսաստան աղափոխելու համար Բոս
 տովի և այստեղի մէջ բանում է մի առանձին
 առողջական գնացք: Նոյնպէս էլ շարունակ բե
 րում են գերի վեր առած տաճիկներին: (Մի տա
 ճիկ օֆիցերի հետ պատահելով ինձ խօսակցել,
 հարցրի արե՞ք իրանք էլ ուսուցիչից գերի վեր
 առին, թէ ոչ: պատասխան ստացայ թէ այս
 կողմում մեր չը կարողացանք վեր առնել, իսկ
 իրովնայում վեր ենք առած 40 հարար ուսու
 զերի):

Ամսոյ 13-ին գեշերով եկած մասնաւոր ան
 ճրկից այստեղի փողոցները կրկին ծածկվեցին
 անանցնելի գեղաւ, որ հաղի ցամաքած էր
 անցելու պարզ եղանակներին, ֆաղաբայից, ինչ
 պէս երևում է, վաղուց սովոր են և անտարտու
 զրօնում են գեղի միջով, առանց հոգալու փո
 ղոցները և հրապարակները մարբուսն համար:

Ս. Յ. Մ.

ՆԱՄԱԿ ԻՍԲԱԿԻՆ

Թիֆլիս Նոյեմբերի 15-ին

(Մշակի) 82-երորդ համարի Ֆելիետօնի մէջ
 պ. Ասիացին ակնարկութիւն անելով մեր հա
 բուստ դասի դէպի ազգային գործերը ունեցած
 ժլատութիւնը և ստանաւորութիւնը, ի միջի այլ
 և այլ օրինակներով առաջ էր բերած և ինձ, որ
 Հաւաքարում Մարիամեան օրիորդական զըպ
 րոցը պահպանելու համար, ուսումնարանի հաս
 տատուն արդիւնք չունենալու պատճառաւ,

Թիւններն վերջացուել թէ չորոչէր քրիստոնէա
 նահանգապետ կարգի այնտեղ, որպէս առա
 ջարկած էին եւրօպական մեծ տերութիւններն:
 Նոյն որոշում պէտք է գործադրել նաև վանի,
 Մուշի և Հայաստանի մի քանի քաղաքների հա
 մար ուր այսչափ տարիներէ ի վեր անդադար
 հարստաշարութիւններ կը լինին և թիւրք նա
 հանգապետներն (վալի) և դաւաւապետներն
 (միւլէտարք) անկարող եղած են մինչև այժմ
 զօպել հարստաշարող թուրքերն և քուրդերն,
 Սուլթանների յայտնած փափաքներին հակա
 ունի: Երբ այդ մասնատականերն տեսնեն թէ
 Սուլթանն այնչափ կը յարգէ իր հպատակ քրիս
 տոնեաները որ նահանգապետի պաշտօն կը
 յանձնէ նոցա, անշուշտ ալ չեն համարձակիր
 ամենացած ամականներով անպատուել հայերն
 և ստրուկների պէս վարուիլ նոցա հետ:

Սուլթանն Համիդ Բ. խոտապաւ Ներսէս
 պատրիարքին որ հայերի իւրեանց հաւատաբ
 մութիւնի պտուղներն պիտի քաղեն, պատերազ
 մէն յետոյ երկնային օրեր տեսնելով: Ինչ պիտի
 լինին հաւատարմութիւնի պտուղներն (!!!), այդ
 մեր չենք զիտեր. բայց սա ամենայայտնի բան
 է որ մինչև հայ նահանգապետներ չը լինին Հա
 յաստանի մէջ, չէ կարելի որ հարստաշարու
 թիւններն վերջանան և հայերն երկնային օրեր
 տեսնեն:

Մեր այս յօդուածի մէջ նպատակ ունեցանք
 գլխաւորապէս նահանգապետներին վրա խօսիլ:
 Բայց տարակոյս չը կայ թէ անհրաժեշտ հարկ
 է որ ուրիշ շատ արտօնութիւններ ալ տրուին
 թուրքապատակ հայերին որպէս զի կարենան
 անդիլ իբր մարդ, իբր մարդ անիք, զի թուրք
 կառավարութիւնն կրելի թէ իբր մարդ չը հա
 մարելով քրիստոնէային, նոցա վկայութիւն
 չընդունեն (չէրիք) օրէնքով, այնպէս որ երբ մի
 մասնատական ձեռն է շարչարէ քրիստոնէային,
 քրիստոնէայն դատարանի բողոքած ժամանակ
 պարտաւոր է մասնատական վկաներ բերել զի
 քրիստոնէայի վկայութիւնն չընդունուի: Յայ
 անի է որ մասնատական ալ չըրթար իր կրօ
 նակցին դէմ վկայութիւն տալ դատարանի մէջ:

ստիպված եմ այս և այն հարստի օրորմու
 թեանը դիմելու, Յարգել խմբագիր. ինչպէս որ
 պ. Ֆելիետօնիստ Ասիացին իր Ֆելիետօնի մէջ
 յանդիմանում էր մեր հարստա դասը, ես ես,
 համաձայն նորա ճշմարիտ խօսքին, ատու եմ
 որ արդարև մեր հարստաներին ուսումնարանի
 գործի համար օգնութիւն խնդրող միշտ դա
 տարկ ձեռքով և իր դիմելու համար զըջալով է
 վերադառնում իր տունը, որովհետև ստան բա
 ցատութիւն ստանալուց դատ, զիմող հարկա
 դրված ես լինում է մի քանի յանդիմանական
 կէտին նայող խրատներ էլ լսել: Այս ատու եմ
 ես փորձերի վրա հիմաւորված, որոնց հրապա
 րակ հանելը խոսեմութիւնը արգելում է ինձ:

Մեր հարստաներին բուրբոլին փոյթ չէ թէ
 աղքատ քովից կը մեռնի, նա բուրբոլին դար
 չի անիլ թէ իր խեղճ հարեանի տղան ու աղ
 ջիկը ուսումից զուրկ մնալով, վերջը պէտք է
 անբաղ ու մուրացկան լինեն: Նա ամուր փա
 կում է իր քսակը «օգնեցէք» ձայնը լսելու ժա
 մանակ, բայց և այնպէս չաւայ վատնում է թէ
 օտարի և թէ անտեղի բաւականութիւնների հա
 մար:

Մեր հարստաները անթիւ են, իսկ ազգային
 գործերին օժանդակողները մատնելով ցուցա
 նելի: Մեր ազգային հիմնարկութիւնները պահ
 պանդները եղել են և են միշտ մեզ նման ու
 ճիկով ապրող և հաղի կենսական ապրուստը
 հայթայթող անձանց լուսաները. այն, այն քըր
 տնքոս կօպէկները, որոնց խրաբանչիւրը կու
 բլիս, արիւն կը զըլսեն նոցա միջից:

Հաւաքարի Մարիամեան ուսումնարանի գո
 յութեան համար նպատակներն էլ պատկա
 նում են վերս յեւած սուգ չըջանի դատարարին,
 բացի երկու անձինքներից, որոնք իբրև բարե
 պաշտ իշխաններ, առանց իմ դիմելու՝ իրանք
 ուղարկել են իրանց նաւերները:

Շնորհակալութեամբ օրտի յայտնում եմ՝ որ
 կրկին շնորհի վերին-Ազուլեցի մեծապատու պ.
 Մարտիրոս Հախնապարեանից աւելացան ու
 սումնարանին երբեք խնամակալ, որոնք շարու
 նակ տարեկան վճարելու են հնգալուս թուր,
 նոքա են: Կերճէցի բարեկրօն Ստեփաննոս քա
 հանայ Սամուէլեանց, և պ. պ. Ազուլեցի Համ
 բարձում Միրմանեանց և Թիֆլիսից Կանիւլ
 Ալլահաբեկեանց: Իսկ մասնաւոր նուիրատու
 եղի են պ. պ. Վերին-Ազուլեցի Միքայիլ Տէր
 Միքայելեանց, որ տուել է 10 թուրք, Շուշեցի
 Աղասի Բէլուբեկեանց 2 ր., Մեհրաբ Մէլիք

որով խեղճ հայերն թէ կը ձեռնուին և թէ անկա
 րօղ կը մնան բողոքել: Թէև «Մանդիմաթի» օրէն
 քով պէտք է որ ընդունուի ոչ — մասնատակա
 ների վկայութիւնն, բայց այդպիսի ֆէլիետաներ
 կը գրուին այն նպատակով միայն որ հրատա
 րակուին աշխարհի առջև և ոչ որպէս զի գործա
 դրուին: Թուրքիան շատ լաւ հրովարտակներ և
 սամանապրութիւններ կարող է հրատարակել,
 բայց ինչ օրուս կըր այնպիսի մարդեր չունի
 որք ընդունակ լինին գործադրել:

Շատ ցանկալի էր որ Տիֆլիսի մէջ այնպիսի
 փաղկեմը և խօսարաններ կազմուէին ուր արեւ
 լեան հարցին վրա հրապարակաւ վիճաբանու
 թիւններ և խորհրդածութիւններ լինէին և հա
 յերն որչափ որ կրնան մասնակցութիւն ունենալ
 այդ հարցի, նոյն չափով ալ գործէին: Այլ թէ
 հարկ չէ որ Տիֆլիսի պէս հաւաքարի և կենդրո
 նական մի քաղաքի մէջ ազգային ընկերութիւն
 ներ, խօսարաններ, լսարաններ լինին: Մեզ հա
 մար զարմանալի է այս անշարժութիւն: Ուր
 շարժում չը կայ, այնտեղ կհանքն ալ կը զարդի:
 Մեր չենք զիտեր թէ այստեղ ազգային կեանք
 և գործունէութիւն յայտնող նշաններն որոնք
 են, ուր պէտք է որոնել. միթէ մեր ազգային
 կեանքի նշանն կանխատրոնին է որ լոկ հո
 գեորական ժողով է. միթէ մեր ազգային կեանքի
 նշաններն մեր ուսումնարաններն են միայն որք
 հայ ազգի մանկական մասին ժողովարաններն
 են, իսկ հասակով զարգացած մասի ազգային
 կեանքն ուր պէտք է որոնել, ուր է նորա գործի
 սպասարկութիւնն որ ազգային հարցերի վրա
 խորհելով և խօսելով ժամանակ անցունէ...

Անհրապարհանց 2 ր., վերին-Ազգուկի օրերը
 Գարիկ խօսակցական 1 ր., Օրերը-Մարիամ
 Բարութիւններ 1 ր., Հայ սին 1 ր., N. N. 90
 Կողմի, քահանայ սին 50 կողմ, վ. 50 4.,
 և Ազգաւորը Երասխան 40 կողմի

Ի բոլոր սրտէ յայտնելով իմ շնորհակալու-
 թիւնը թէ յիշեալ նուիրատու անձանց և թէ
 այս նուիրները հաւաքող պ. Մարտիրոս Հախ-
 նազարեանցին, խնդրում եմ մեր հարուստնե-
 րին հաշտ և ողորմած աչքով նայեն զէպի աղ-
 քատիք Մարիամեան դարձողը, որ Հաւարարի
 մէջ տարածում է ճշմարիտ հայութիւն, հայկա-
 կան մարտը հողով կրթում է իրան յանձնված
 հայ օրերըները և ոչ մի տեղից թշնամիներից
 աւելի ոչինչ նիւթական ապահովութիւն չունե-
 նալով, կառավարվում է այդ նուիրաբերութիւն-
 ներով և իմ անձնատուէր աշխատանքով:

Աշակերտութիւնների թիւն է այժմ 76: Ստորա-
 գրութիւնը շարունակվում է բացի «Մշակի» 73
 համարում յայտնած տեղերից, այլ և պ. Մար-
 տիրոս Հախնազարեանցի մօտ, որ գտնվում է
 Միքայելեան կամուրջի վրա, պ. Տեր-Յովհան-
 նիսեանցի քաղցրահամայն խանութում:

Տեսուչ՝ Պօղոս Քաթանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 23-ին, այսինքն Ղարս ընկնելուց
 չորս օր յետոյ Կ. Պօլսում առաջին անգամ
 յայտնեցին այս անցքը: «Բարխիթթ» լրագիրը
 ասում է, որ յարձակումն շարունակվում էր հինգ
 օր ու զիշեր: Ղարսի բերդապահ զօրքը մեծ քա-
 ջութեամբ պաշտպանվում էր: Ղարսի բերդա-
 պետը Յուսէփ-Համիլ հագիւ կարողացաւ փախ-
 չել: Մուսկար-փաշան հեռագրեց Կ. Պօլս,
 որ ինքն ստացաւ պաշտօնական տեղեկութիւն
 Ղարս վերցնելու մասին, որի հետ միասին
 պահանջում են որ իրգրումը անձնատուր լինի
 առանց արկանհեղութեան:

Վ. Ա. Գ. Ի. Ա. Ա. Կ. Ա. Ա. Ի. 8 գրում են, որ 16-ին նոյեմ-
 բերի Կազմատնից ուղարկած հեռագիրը յայտ-
 նում է, որ Ուսումնական և նրա որդին, որոնք
 ապստամբեցրել են չէչեններին, կալանաւորվե-
 ցան:

«Тифл. Вѣстн.» լրագրին հաղորդում են, որ
 այս ամսի կէսին թիֆլիսումը կալանաւորված
 են չորս մարդ, որոնց կառավարում են կեղծ գրամ
 չինելու մէջ: Այժմ նորա բանտարկված են Մե-
 տէի բերդում:

Նոյն լրագիրը լսել է որ Ղարսում շինվում
 է զինուորական տպարան: Թիֆլիսից կանչված
 գրաշարները տաս օրուայ միջոցում պէտք է
 գտնվեն վերադիւնալ քաղաքում:

Ստացանք յօդուտ հայ գաղթականների թիֆ-
 լիսի առևտրական գործակատարներից 20
 բուրբ: Այդ գումարի մէջ մի քանիսները տուել են
 միանուագ: միւսները պարտաւորվել են ամսից
 ամիս տալ մի որոշ գումար: Նուիրատուների
 ցուցակը կը տպենք միւս համարում:

Մեր խճաղաբութեան մէջ ընդունվում են
 նուիրատուութիւններ յօդուտ թիֆլիսի քաղաքի
 զինուորականների աղքատ ընտանիքների: Նուիր-
 ատուութիւնները սերմն կարելի է ուղարկել «Մը-
 շակի» խմբագրութեանը:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում
 է որ տրվում է վաճառ մի խանութ երևանեան
 հրապարակի վրա, աւաղ-պօլիցէյմէյստերի բնա-
 կրանի տակ: Պայմանների մասին կարելի է
 տեղեկանալ քաղաքային վարչութեան մէջ ամեն
 օր 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՒՐԻԱ

Վիեննայի «Politische Correspondenz» լը-
 րագրին Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է
 հետևեալը: Տաճկաստանի բոլոր Մէշիդ-
 ների մէջ Նէյս-ու-Իլյալը մոցրել է այս
 աղբթը:

Ստանուորումս Աստուած, խղճայ մեզ, քո
 խեղճ ժողովրդին ամենակարող Աստուած, մի
 խնայիր անհաւատներին, բարի Աստուած, ամ-
 բարեցրու ուղղափառների բազմութեանը...

Ամբարցրու, Աստուած, քո ծառայ Սուլթա-
 նին, քո սիրած ժողովրդի գլխին Պահպա-
 նիր մեզ և մաքրիր մեր երկիրը անհաւա-
 տներից, որոնք կուռում են քո միակ ճշմարիտ
 հաւատի դէմ: Քննիր երկրի երեսից, ով ա-
 մենակարող Աստուած, անաստուածների ամեն
 մի հեռքը ուսների, բոլորների և յոյների,
 նորա գլորվում են անաստուածութեան խա-
 ւարի մէջ, ինչպէս խոզեր ճահիճների մէջ,
 և համարձակվեցան նորա ձեռք բարձրաց-
 նել քո հաւատարիմ ժողովրդի և քո մար-
 դարէի Մահմէդի վրա, քանզի նրանց դաշ-
 նակցութիւնը: Յիր ու ցան արա նրանց զօր-
 քերը, ջարդիր նրանց գէշքերը, քանզի նրանց
 կարգերը, ոչնչացրու նրանց զօրութիւնները:
 Գցիր նրանց դժոխքի խորքը: Այնպէս արա,
 որ ուսաց գլուխները գլորվին քեզ հաւա-
 տարիմների ոտքերի տակ և հայածիր նրանց
 գլխին—Թագաւորին, ոչնչացրու նրանց բերքը,
 ջնջիր ու ոչնչացրու նրանց ուժերը: Նրանց
 երեխանց դարձրու որբեր և նրանց կանանցը
 այրիներ: Նրանց մայրերին ցցիր յուսահա-
 տութեան մէջ, պղտորիր նրանց միտքը: Ով
 Աստուած, ջնջիր, Մոսկովեան անաստուածնե-
 րին, նրանց բոլոր օգնականներին և նրանց
 համակողմնակիցներին, թափիր նրանց վրա անհա-
 մար վերքեր: Թափիր նրանց արիւնը հեղեղել
 նման, թող քո սարսափելի բարկութեան զո-
 հեր գառնան նրանք, թող նրանք կրակով
 ջնջվին, սրով, նաւաբեկութեամբ, ժանտախ-
 տով, կախաղանով, սովով և երկրաշարժով,
 ամեցացրու նրանց քաղաքները, ջնջիր նրանց
 բնակութիւնները քո վրէժնալիր հրեշտակ-
 ներով: Թող տանջվին նրանք, ոչ միայն իրանց
 անգամների մէջ, այլ և իրանց կանանց և
 երեխանց մէջ և թող զրկվին իրանց զոյու-
 թենից, թող թափվին քո բարկութեան և
 ահաճութեան հարուածները նրանց վրա
 ինչպէս կարկուտ... և թող գառնան նրանք
 և նրանց հարստութիւնները քեզ քո մարդա-
 րէին հաւատացողներին աւար, որոնց հետ և
 թող լինի Ալլահի ողորմութիւնը և օրհնու-
 թիւնը:

Պ. ԼԱՅՄԱՐԻ ԿՈՄՍ ԳԵՐԲԻՆՆ ԱՊՐԻՆԻ
 26-ԻՆ ԳՐԱՄ ՆԱՄԱԿԸ

Այսօր Գրիգորեան հայոց պատրիարքն այ-
 ցելութիւն տուաւ ինձ: Նորին սրբազնու-
 թիւնն եկաւ իմ զարուստ բարեկեւո և իւր
 ազգին վիճակին և կարծեաց վրա խորհրդա-
 բար խօսելու:

«Ինձ ըրած յայտարարութեանց բովանդա-
 կութիւնն այս է: Կրտէ թէ հայերն աւելի
 կը սիրեն Օսմանեան իշխանութեան ներքե-
 մնալ՝ քան թէ Ռուսիոյ իշխանութեան
 ներքե գրել: Իրենց շահեր թուրքաց շահե-
 րուն հետ նոյն են, և աւելի բարօրութեան
 ու ազատութեան հաւանականութիւններ կը
 տեսնեն օսմանեան հպատակ մնալով՝ քան
 թէ Ռուսիոյ հպատակ ըլլալով: Կ. Պօլսը և
 մերձակայ գաւառաց մէջ գանդատ մը չունին
 թուրքաց դէմ: պարտաւոր և կարեոր պաշ-
 տօններ կը վարեն, և տերութեան վարչու-
 թեան ու կառավարութեան վրա ազդեցու-
 թիւն ունին:

«Ներքէ, երբ որ Ռուսիոյ պատերազմ հրա-
 տարակիւր ծանուցուեցաւ Օսմանեան երես-
 փոխանութեան և Տերակուտի ժողովոց մէջ,
 աւելցուց Նորին Սրբազնութիւնը, Օսմանցի
 երեսփոխանը միաձայն աղաղակեցին թէ Սուլ-
 թանին իրաւունքը պաշտպանելու համար
 ամեն զոհողութիւն ընելու պատրաստ են, և
 ոչ ոք բացի հայ երեսփոխանաց աւելի խանդ
 ցոյց տուաւ այս մասին:

«Նորին սրբազնութիւնը կը պնդէ թէ
 թուրք կառավարութիւնը պէտք է քաջալերէ
 հայոց այս ողին՝ ամեն հնարաւոր նպատ և
 պաշտպանութիւն շնորհելով անոր: Կընդունի
 որ Վանայ մէջ և Հայաստանի ուրիշ կողմերն
 որ հայոց վնաս հասցնող զլխաւոր քուրդերը
 կենտրոնական կառավարութեան հսկողու-
 թիւնէն դուրս են, բայց կուեւրացնէ թէ Վա-
 նայ շուկան որչափ որ քրեւտերը բռնկուցնին
 թուրք զօրակա՞ք ալ անոնց հետ միանալով
 աւարաւորութիւն ըլին: Իրեւն այս գործին
 վրա անկողմնակալ և ձիջը քննութիւն մը
 ընել և յանցաւորները խտուր պատժել խոս-
 տացաւ: Կրտէ Անգղիոյ վեհ. թագուհւոյն
 կառավարութեան դիտողութիւններուն վրա է
 որ յուսակց խոստումներ տրուեցան, որոց
 համար ինքն և իւր ժողովուրդը մեծագույն
 շնորհակալ են, բայց կը ցաւի բերել թէ
 մինչև ցարդ գործադրութիւն չը գտան: Այս
 բանը անհամար տպաւորութիւն մ'ըրաւ հա-
 յոց վրա: Թուրք կառավարութիւնը պէտք
 չէ մոռնայ թէ հայոց պատրիարքներէն մին,
 որ մեծ ազդեցութիւն ունի հայոց ազգին
 վրա, էջմիածնայ պատրիարքը՝ Ռուսիոյ հը-
 պատակ է և թէ Ռուսիա իւր Հայաստան
 արշաւող բանակներուն մէջ դիտմամբ վտա-
 հուցութեան բարձր պաշտօններ տուած է հա-
 յոց, որպէս զի հայ քրիստոնէից համակու-
 թիւնը գրաւէ: Նորին սրբազնութիւնը կը
 կարծէ թէ ուսերը բնաւ յաճողութիւն չեն
 կրնար գտնիլ՝ եթէ Իրեւն հայերն իրենց
 ընչից և պատուոյն մէջ արդարութեամբ կա-
 ռավարելու դիտաւորութեան փորձեր տալ
 ուզէ: Եթէ Իրեւն այսպէս ընէր, կրնար քա-
 ղաքային կամ ազգային զինուորութիւն մը
 կազմել հայոցմէ, որք պատրաստ կըլլային
 իսլամաց հետ երկիրը պաշտպանել ուսաց
 յարձակման դէմ:

«Վսի պատրիարքին թէ իւր տուած տեղե-
 կութիւնները մեծ զոհութեամբ լսեցի: Իմ
 կարծիքս այս եղած է միշտ, որ եթէ Սուլ-
 թանն երկիրն վարչութեան մէջ իւր քրիս-
 տոնեայ հպատակաց իրաւամբ պէտք եղած
 մասնակցութիւնը տար, զանոնք կատարեալ
 հաւասարութեան վիճակի մէջ դնել իսլամաց
 հետ, ինչպէս որ իւր շահն իսկ պարտք կը
 դնէ իւր վրա, հայերը կարեոր մասնակցու-
 թիւն մը կունենային Թուրքիոյ կառավարու-
 թեան և մեծագույն կը բարգաւաճէին. հայերը
 մասնաւորապէս նպաստաւոր դիրք մ'ունեն,
 և իրանց քաղաքակոչ կացութեամբը կապած
 կամ նախանձ չեն ազդեր թուրքաց:

«Պոստացայ Նորին սրբազնութեան որ ձեռ-
 քէս եկած ջանքն ընմ' Վանայ գործերուն
 վրա քննութիւն բանալու և յանցաւորաց
 պատժելը ձեռք բերելու համար: Հրաման
 ըրի Անգղիոյ-սընին որ հասկնէ: Ստիֆիլթ փա-
 շային թէ որչափ հարկաւոր և թուրք կա-
 ռավարութեան ալ շահաւոր է հայերը զոհ
 ընել՝ Վանայ մէջ գործուած թշնամանաց
 հեղինակները պատժելով, և այսպէս փոր-
 ձով ցուցնել թէ իրանց լիակատար պաշտ-
 պանութիւն շնորհել հաստատ դիտաւորու-
 թիւն ունին»

(Արշալոյս Արարատեան)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՍԻՆ
 Վան, 1 նոյեմբ. 1877

Բաւական ժամանակ է որ նամակ գրած չեմ
 ձեռ: Պատերազմական գրութիւնն մեր ձեռքեր
 կապած է. կը վախենք թէ փոստի վարչութիւնն
 բանալ մեր նամակ և երբ տեսնէ թէ Տիֆլիսի
 հետ թղթակցութիւն ունինք, կառավարութիւնն
 իբր վտանգաւոր մարդ վարուի մեզ հետ: Այս-
 տեղ մանրամաս քննութիւններ չեն աներ այդ-
 պիսի գործերի համար, մանաւանդ այս պատե-
 րազմի ժամանակ, մի փոքր կասկած ունենան,
 իսկոյն կը պատժեն:

Ուստի երբ տեսայ թէ բարեկամներէս մին
 Պարսկաստան կերթայ, այս նամակ գրեցի որ
 Պարսկաստանի փոստով հասցունէ ձեզ:
 Քուրդերի հարստահարութիւններն այժմ կե-
 րելի թէ մի քիչ պակասած են և փախստական
 գիւղացիներն կը մտածեն վերադառնալ իւ-
 բեանց գիւղեր գի խոմայիլ փաշայի բանակին
 մէջ եղած սարդերէն շատերն կոտորուեցան,
 շատերն ալ սարսափած փախան վերադարձան
 իւրեանց սարեր:

Թուրք կառավարութիւնն տեսնելով թէ իւր
 զօրքեր փախելով և կոտորուելով շատ պակա-
 սած են և բանակն տկարացած, վանի հայերէն
 300 կամաւոր զօրք պահանջեց. և երբ հայեր
 չը յօժարեցան կամաւոր զօրք տալ, կառավա-
 րութիւնն սկսաւ բռնի մի կամ երկու մարդ
 պահանջել ամեն մի հայաբնակ թաղէն, որչէս
 զի զօքս ծառայութիւն և բեռնակրութիւն անեն
 բանակին մէջ: Վանի թուրքերէն կամաւոր զօր-
 քերի մի նոր խումբ կազմուեցաւ որք պիտի
 երթան Բերկրի բանակն: Բերկրին, Բայազէտի
 արեւելեան հարաւակողմն է, Բայազէտի և Վանի
 մէջ: Այդ կամաւորների խումբին հետ բռնի
 պիտի տարուին հայերն ալ սպասաւորել բա-
 նակին մէջ: Վանի հայեր դեռ կը յուսան որ
 ուս կը գայ քիչ ժամանակէն և կարգաւորին
 հարստահարութիւններէ: Ուստի համբերութիւ-
 նով կը տանին ամեն նեղութիւններ, հաւատա-
 ցած լինելով թէ վերջին նեղութիւններն պիտի
 լինին դոքա. միք ալ այդպէս պիտի հաւատա-
 յինք, թէ հայերն պատրաստուած լինէին օգուտ
 քաղել այս պատերազմէ. բայց նկատելով մեր
 ազգի անչարժութիւն և անգործութիւն, մեք
 յուսահատ ենք...:

Այստեղ իւր կայ թէ ուսեր Վանի վրա կը
 գան և թէ Մեծօփայ վանքին մօտ եկած են.
 Բայց այժմ այնչափ սուտ լուրեր կը հնարուին
 և չուտով կը տարածուին հայերին և թուրքերին
 մէջ, որ ճշմարիտն որոշել շատ դժար եղած է:

Վանէն գրեթէ միշտ տխուր լուրեր կը հա-
 զօրուին ձեռ: Որպէս զի ձեր ընթերցողները
 տիրութիւնն մի քիչ սփոփեմ, կուզեմ վերջա-
 ցունել նամակ ուրախաւոր թեղեկութիւններ
 ձեզ հաղորդելով: Այդ ուրախալի երեսջին է
 Վանի զպրոցականներին մէջ տեսուած ընկե-
 րական եռանդն և շարժումն:

Արդէն անցած տարի նոյեմբեր ամիսին մէջ
 երբ պ. Մ. Փորթուղալեան Վան կը գտուէր և
 կը գաստիօսեր Հայկազեան վարժարանին մէջ,
 այդ վարժարանի ուսանողներէն մի ընկերու-
 թիւն կազմուեցաւ շարքնասեր Սամսոյ ընկե-
 րութիւնն անուն: Այդ ընկերութիւնն նպատակ
 ունի կիրակի օրեր ձրի ապէս դասախօսուել
 ու է հասակէ ազգայիններին, լսարան ու-
 նենալ ուր ազգասիրական ատենաբանութիւն-
 ներ և ուսումնական նիւթերի վրա հրապարա-
 կական դասախօսութիւններ լինին, նաև մի
 ընթերցարան ուր գրքեր և լրագիրներ
 գտնուելով, ամեն ազգային երթայ ձրիապէս
 կարգայ: Այդ հայրենակից ուսանողների ընկե-
 րութիւնն՝ իւր գործակից ունելով մի քանի ու-
 սեալ և երիտասարդ դասատուներ, վերոյիշեալ
 երեք նպատակներն ալ որչափ որ ժամանակն
 և պարագաներն թոյլատրեցին, սկսաւ գործա-
 դրել այս Ա. տարեկան չըջանին մէջ:

Քանի որ պ. Փորթուղալեան այստեղ կը գը-
 տուէր, Հայրենասեր ընկերութիւնի տեսչական
 պաշտօնն կը վարէր. բայց նորա մեկնելէն յե-
 տոյ այդ պաշտօն յանձնուեցաւ պ. Մ. Նաթա-
 նեանի որ մի աշխոյժ երիտասարդ է: Ընկերու-
 թիւնն որ մեծ մասով զպրոցականներէ կազ-
 մուած է, զարմանալի յարատեւութիւնով անվատ
 շարունակեց իւր գործը. նոյն իսկ վերջին վը-
 տանգաւոր ժամանակներին մէջ, որչափ կարելի
 էր: Ամեն կիրակի հասակաւոր ազգայինների մի
 խումբ կերթայ այդ ընկերութիւնի դասարանն
 դասեր աւուել և ամեն երկու շաբաթն միանա-
 դաւ ատենաբանութիւններ կը լինին:

Հոկտեմբերի 30 կիրակի օր Հայրենասեր Սա-
 նուց ընկերութիւնն իւր Ա. տարեգարծի հան-
 դէսն կատարեց Հայկազեան վարժարանի մէջ,
 ուր, պարագայներին ներածին չափ բաւական
 բազմութիւն հաւաքուած էր: Հանդիսարանն
 զարգարուած չէր արտաքին շեղութիւններով:
 Հանդէսին բոլոր շեղութիւններ կը կազմէին աղ-
 ցային երգերն, ուսումնասիրական և հայրենա-
 սիրական ձառերն և ոտանաւորներն զորս ժո-
 դովուրդն սքնորված կը լսէր և մեծ համակու-
 թիւն ցոյց կը տար այդ ուսանողներէ բազմու-
 ցած ընկերութիւնին:

Հանդէսն վերջացած ժամանակ հանդիսատես
 ժողովուրդին կողմէն տաի կանգնելով պ. Սա-
 շատուր Սաֆրատեան, Հայրենասեր ընկերու-

Թիւնին համակրական և քաջաբերական խօսքեր խօսեցաւ.

Այգեատանի Արարոց վարժարանի ուսանողներէն մի խումբ և քաղաքի բարեխղճ անուն ուսանողներ ընկերութիւն խմբովին ներկայ էին հանդէսին և հայրենասէր ընկերութիւնն քաջաբերօր ճառեր կարդացին:

Այդ Բարեխղճ ընկերութիւն կազմուած է քաղաքի Յիսուսեան վարժարանի ուսանողներէն որք Հայրենասէր ընկերութիւնին վանի ժողովուրդէն գրած ջերմ համակրութիւնն տեսնելով, քաջաբերուած և բարի նախանձի շարժած կազմեցին այս ընկերութիւն, իւրեանց դասատու պ. ի. Գարբրիւնեանի առաջնորդութիւնով: Այս ընկերութիւնի սեռուէն է պ. Հ. Երամեան և նպատակն է կիրակի օրեր հաւաքուիլ, զանազան օգտակար գիրքեր կարդալով և օգտակար նիւթերի վրա խօսակցելով ժամանակ անցունել և խնայողութիւններով փող հաւաքել իւրեանց մէջ և զայն տոկոսի տալ, որպէս զի տաս տարիի չափ յետոյ (երբ իւրեանք ալ հասակով մեծցած և զանազան գործերի մէջ մտած կը լինին) այդ հաւաքուած փողն զբամազուխ անեն և ազգային մի նպատակի գործածեն, այն ժամանակի պահանջներին համեմատ մի գործ որոշելով:

Վանի դպրոցականներին մէջ տեսուած ընկերական այս շարժում մեծ յոյս կը տայ մեզ վանի ազգային համար, թէև ներկայն շատ ճնշուած և թշուառ է, մեզ համար զբամազուխ այն է որ այս ուսումնասիրական և ազգասիրական շարժումներ կը լինին վանի մէջ նոյն իսկ այնպիսի ժամանակ ուր հարստահարութիւն և թրջուառութիւն իւրեանց վերջին ծայր հասած են:

Կ. Պօլսի կազմուած Արարատեան ընկերութիւնն կը շարունակէ իւր նպատակ վանի գիւղերին մէջ, այն է վարժարաններ բանալ և ճրիպէս ուսում ծառայել: Ալիւր գիւղի մէջ Արարատեան ընկերութիւնի բացած վարժարանի ուսանողներն ալ մի ընկերութիւն կազմած են իւրեանց դասատու պ. Զաքար Համբարձումեանի առաջնորդութիւնով և կիրակի օրեր գիւղացիներն եկեղեցին հաւաքելով, հանրէն կարդալ և գրել կուսակցութիւն և հրապարակաւ կը կարդան օգտակար գիրքեր: Պ. Զաքար բնիկ Ալիւրցի է, բայց իւր ուսումը Կ. Պօլսի առած է. տեղեակ է հայերէն, Ֆրանսիերէն և թուրքերէն լեզուներին:

Այստեղ ընդհանրապէս կը խօսուի թէ կարին ուսուցիչն պաշարուած է կիսովի և կասկած կայ որ այսուհետև դարձի կարինէն վան փոստի երթնելութիւնն որ դեռ կը շարունակուի մինչև այսօր: Հետեապէս այն ժամանակ Տրապիզոնէն Երզնկայի (Երզնկեան) գիծով կամ Սամսունէն Տիգրանակերտի (Գիւրբէքի) գիծով վան պիտի գայ Կ. Պօլսի փոստն, թէ կառավարութիւնն արժան համարի փոստի վան երթնելութիւնն շարունակել: Փոստն ընդհանրապէս քաղաքացիներին համար նամակ կը բերէ իսկ Բ. Գուռն

գրեթէ միշտ հեռագրով կը հաղորդէ իւր հրամաններ և հրահանգներ որպէս զի շուտ կատարուին: Փոստն Կ. Պօլսին 20—25 օրէն կը հասնի վան: Վանի հեռագրատունն գրեթէ բոլորովին զրադուած է կառավարչական գրութիւններով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից գրում են 4-ին (16-ին) նոյեմբերի վիճակով «Politische Correspondenz» լրագրին: Ռուսաց Երբրուսին մօտենալով, փոքր մնաց որ այս քաղաքի ընտանիքներն ենթարկէր ընդհանուր կոտորածի: Մահմետականները մէջ չարամտութեամբ տարածվեցաւ այս լուրը, որ իբր թէ հայերը հազարակցութիւն ունեն թշնամիների հետ և կամենում են առաջնորդել ուսուցիչներին դէպի բերքը: Մահմետականները, ահից և ֆանատիկութեանից գրգռուած սկսեցին արդէն դանակներ սրել և հրացանները լցնել, հայերին ոչնչացնելու համար: Այն ժամանակ հայոց Յարութիւն եպիսկոպոսը զնաց Մուստար-փաշայի մօտ և սկսեց հաւատացնել իրա հօտի հայրենասիրութիւնը, յայտնեց նրա անունով, որ հայերը կը մասնակցեն քաղաքի պաշտպանութեան ժամանակ մինչև արեան վերջին կաթիլը: Տաճկաց լրագիրները շտապում են հազորդի այս անցքը, իրանց թիւթերի մէջ, բայց մեծ զգուշութեամբ աշխատում են ծածկել այն թէ ինչ հանգամանքներով և թէ ինչպիսի սարսափելի սպառնալիքներով էր առաջացած այդ բանը: Այստեղ բերված երեք դերի ուսուցիչներէն մէկը—բնիկ դպրոցաւոր է, միւսը—հայ է, իսկ երրորդը—պարսիկ է: Պարսիկը իր ազգայնութեան վրա յոյս դնելով, պահանջեց, որ նրան պարսիկների դեպքանի հովանաւորութեան ներքոյ դնեն բայց Բ. Գուռը մերժեց այս պահանջը:

—«Times» լրագրին հաղորդում են Հուովից, որ երևելի պրոֆեսոր դոկտոր Վանցէտտին կրկին հրաւիրվեցաւ վատիկան Պապի առողջութեան վրա իր խորհուրդները տալու համար: Նա խորհուրդ տուաւ սուրբ հօրը հեռանալու ամեն տեսակ աշխատանքից և մտաւոր պարպումներից: Պապը հիմա կարողանում է միայն ոտքերը հաւասար առջևը ձգած նստել: Նա այս դրութեան մէջ շարունակում է կատարել պատարագը, բայց սովորաբար ընում է դեռ չը վերջացած: Նորա խօսքը առաջուկ պէս յայտնվում է իր կենդանութիւնով և նորա յիշողութիւնը զարմանալի պարզ է, մանաւանդ այն բաների մէջ, որոնք վերաբերում են նորա մանկութեան ժամանակներին: Բայց նրա տկարութիւնը շատ անգամ ջղային գրգռման մէջ է գցում:

—Փարիզ, 22 նոյեմբերի (4 դեկտ.) Սենատում ընտրվեցան երկու անփոփոխ սենատորներ—

Լէգիտիմիստ Լարսին և բունապարտիստ ֆերդինանդ Կարբո:

—Կ. Պօլսի 14 նոյեմբերի: Այստեղ մեծ խռովութիւն է, լավում է որ Գարբրուսին իտալական զօրքի մի մասով գնաց Ալբանիա:

—Աթէնք 22 նոյեմբերի (4 դեկտ.) անգլիական կառավարութիւնը ուղարկեց չրֆաբերական Սերբիային, որով վերջինին արգելում է պատերազմ յայտնել թուրքերին:

—Աթէնք, 22 նոյեմբերի (4 դեկտ.) կրիտայի 300 զինուորված բնակիչները միտք ունեն ապստամբել տաճկաց կառավարութեան դէմ: Թշնամական գործողութիւնները անփութելի են չը նայելով Յունաստանի խաղաղասէր ձգտումներին:

—Փարիզի «Republique Française» լրագրին գրում են Կ. Պօլսից: Բ. Գրանը խօսում են շուտ պատգամաւորութիւն ուղարկելու ուսուց

րանակը. որա համար աչքի առաջ ունեն Սալֆեա փաշին և Մուստէշար Աղէքսանդր Վարաթէօօրին: Խաղաղութեան գլխաւոր պայմանները, որ տաճկաց զեպպանները պէտք է առաջարկեն սրանք են: Ա. նեղուցների վրա լուրջաւ ազատութիւն Սև ծովի այլ ևս չի լինի mare clausum., Բ. Գուռը Բուֆօրը և Գարդանել կը բացան ամեն ազգերի զինուորական նուերի համար. յօդ. 2 ուսուցները, իրանց սահմանները ուղղելու նպատակով կը միացնեն իրանց երկրի հետ տաճկաց նոյի մի քանի մասերը պարսկաց սահմանի կողմը Բայազէթի և վանի կողմերից: Յօդ. 3. Բ. Գուռը կը ճանաչի Չէրնոգորիայի անկախութիւնը և կը հաստատի վերոյիշեալ սէրութեան վերջին ժամանակվայ բոլոր նուաճած երկիրները: Յօդ. 4. Սուլթանը կը պարտաւորվի կատարել սահմանադրութիւնով խոստացած բոլոր վերանորոգութիւնները, երեք տարվայ ընթացքում:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

„ՄՂԱԿԻ“ խմբագրատան մէջ ծախվում է տպելու ԹՈՒՂԹ էժան գիով: Տեսնել կարել է ամեն օր առաւօտները, մինչև 12 ժամ կէտրի:

Въ редакція «МШАКЪ» по случаю продается дешево комментарная бумага. 3—5

СКЛАДЪ РАЗНЫХЪ СОРТОВЪ БУМАГИ помѣщается на углу Вельяминовской улицы, рядомъ съ конторою газеты «Кавказъ» въ домѣ Хосроева.

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐԻ ՊԱՀԵՍ Գանվում է Վէլամյանօվոյայ փողոցի անկիւնում, «Кавказъ» լրագրի խմբագրատան մօտ, Խօսրօկի տանը: 3—3 (1)

Գուռը կեւու մամուլի տակից

«ՆԱԼԱՅ ԵՒ ԳԱՄԱՆԱՆՏԻ» Հեքիաթ. Թարգմանեց հայ երկխոսի համար Գէորգ Ա. Երևանցի, հրատարակեց գրաւաճառ Զ. Գրիգորեանը: Կինն է 20 կողէի: Թարգմանողը և հրատարակողը վաճառելուց զոյսցած բոլոր գումարը նուիրում են յօդուա 3000 զողթած հայ ընտանիքներին: Իրի քաղաքներից ցանկացողները կարող են զիմել գրաւաճառ Զ. Գրիգորեանցին 25 կող. ուղարկելով: 1—3

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօդուա Թիւրքիայից դէպի Անդրկովկաս զաղթականների յայտնում է որ յօդուա կարօտեալ զաղթականների ընդունվում են ամեն տեսակ հին և նոր շորեր, Պահեսաբ գտնվում է Արծրունու քարվանսարայի մէջ: Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին իվանովի այժմ Յովհաննիսեանի ընթերցարանը, Կիւրցօվի փողոց, Արծրունու առև, որտեղ և կը ստանան տպված ստացականներ իրանց ընծայարկութեան համար: 6—20 (1)

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօդուա զաղթականների յայտնում է որ, գրամական նուիրատուութիւնները յօդուա զաղթականների ընդունվում են «Մշակ» և «Тифл. Вестн.» լրագիրների խմբագրութիւնների մէջ և «Փորձ» հանդիսի խմբագրատան մէջ: Նոյնպէս ընդունվում են գրամական նուիրատուութիւնները և պ. Զիթախովի կանտորայում, Շաղինօվի քարվանսարայում, (Բաղադկանի ետև): 6—20 (1)

Table with multiple columns: ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՒՆՈՑ (Երկրորդ 28-ին), Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց, ՓՈՒԹԻՖԼԻՍՏԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ, ՓՈՍՏ, «ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ. Includes various rates and prices for different services and goods.